ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝
ք. Երևան, Ալ. Մանուկյան 11
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝
Որակի ապահովման բաժին

ՊԱՇՏՈՆԸ՝
Որակի ապահովման բաժնի ղեկավար
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ՝ 09:00-17:30

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

- իր գործառույթների հետ կապված իրավական ակտերի իմացություն,
- նպատակների սահմանման, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի մշակման, արդյունքների ամփոփման ունակություններ,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություններ,
- ծրագրերի, աշխատանքի կատարողականի գնահատման և կառավարման, արդյունքների ապահովման, որոշումների կայացման հմտություններ,
- հաղորդակցման, բանակցությունների և խորհրդակցությունների կազմակերպման, վարման հմտություններ,
- թիմային աշխատանքի կազմակերպման, միջանձնային հարաբերությունների և բախումների կարգավորման հմտություններ,
- տեղեկատվության հավաքագրման, վերլուծման, մատուցման, ուսուցման, տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ,
- ծառայությունների մատուցման և քաղաքացիներին սպասարկման ունակություններ,
- ժամանակի կառավարման և ռեսուրսների բաշխման ունակություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- իրականացնել Որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գործունեության ղեկավարում, ապահովել դրա աշխատանքի կազմակերպումը, կատարել, ինչպես նաև Գիտական խորհրդի որոշումները, ռեկտորի հրամանները կարգադրությունները և հանձնարարությունները,
- իրականացնել Բաժնի աշխատակիցների գործունեության վերահսկողություն,
- ռեկտորին ներկայացնել Ինստիտուտի գործունեության կատարելագործման, և Բաժնի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող առաջարկություններ,
- մշակել փաստաթղթերի նախագծեր՝ կապված Ինստիտուտի որակի ապահովման կազմակերպման և զարգացման հետ,
- կազմակերպել Բաժնի աշխատակիցների որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
- վերահսկել աշխատողների կողմից ՀՀ օրենսդրության, Ինստիտուտի կանոնադրության և այլ իրավական ակտերի, այդ թվում՝ անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանումը,
- մշակել Ինստիտուտում կրթության որակի ապահովման ուղղությամբ համապատասխան որոշման նախագծեր և մեթոդական ցուցումներ,
- կազմակերպել և ներդնել կրթության որակի ապահովման և մշտադիտարկման գործընթացներ,

- վերլուծել Ինստիտուտում որակի ապահովման համակարգի արդյունավետությունը, այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդրված կրթության որակի ապահովման լավագույն մոդելները,
- վերապատրաստել պրոֆեսորադասախոսական կազմին և ներքին պատասխանատուներին՝ կրթության որակի ապահովման ոլորտում,
- ձևավորել և համակարգել կրթական որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբեր,
- տրամադրել խորհրդատվություններ կառուցվածքային ստորաբաժանումներին որակի ապահովման վերաբերյալ,
- տրամադրել տեղեկատվություն կրթության որակի ապահովման ոլորտում ԵՀ-ի և Բաժնի գործունեության արդյունքների և ձեռքբերումների վերաբերյալ ներքին և արտաքին շահառուներին,
- աջակցել ԲՈՒՀ-գործատու համագործակցությանը,
- ներկայացնել Բաժինը արտաքին հարաբերություններում,
- իր լիազորությունների սահմաններում համագործակցել այլ կազմակերպությունների և պետական մարմինների հետ,
- իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Ինստիտուտի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Բարձրագույն կրթություն
- ՀՀ պետական լեզվի իմացություն
- Օտար լեզվի իմացությունը ցանկալի է և կդիտվի առավելություն
- Գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ
- Կազմակերպվածություն և ժամանակի կառավարման հմտություններ
- Համակարգչային և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն
- Բարեվարքության պահանջների մասին գիտելիքների առկայություն:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 04.07.2024թ.

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

Հետաքրքրվող անձինք իրենց ինքնակենսագրականները (CV) կարող են ուղարկել heghine.mitoyan@sportedu.am էլեկտրոնային հասցեին՝ «թեմա» (subject) դաշտում նշելով պաշտոնի անվանումը՝ «Որակի ապահովման բաժնի ղեկավար»:

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները: